«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ

(Կազմված է «26» ապրիլի 2024թ.)

ք.Երևան, Արշակունյաց 5.108 սենյակ 26.04.2024թ., ժամը 16:00

Համաձայն 06.02.2024թ.-ի «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ Վարդգես Սաղոյանի կողմից ստացված դիմումի Աննա Քիշմիրյանի սնանկության գործով կառավարիչ Արման Տոնոյանի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու դիմումի հարցը քննարկելու նպատակով ս/թ.-ի ապրիլի 26-ին հրավիրված Կարգապահական հանձնաժողովի նիստ:

ԾԱՆՈՒՑՎԱԾ Է Ն՝

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

Աննա Քիշմիրյանի սնանկության գործով կառավարիչ՝ Արման Տոնոյանը

Դիմումատու՝ Վարդգես Սաղոյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝Արմինե Մովսիսյանը

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

Աննա Քիշմիրյանի սնանկության գործով կառավարիչ՝ Արման Տոնոյանը

Դիմումատու՝ Վարդգես Սաղոյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ Վարդգես Սաղոյանի կողմից ստացված դիմումը Աննա Քիշմիրյանի սնանկության գործով կառավարիչ Արման Տոնոյանի վարքագծի գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության քննարկման հարցի շուրջ կառավարչի կողմից ապացուցողական փաստաթղթերի ներկայացումը:

ԼՍԵՑԻՆ

Կարգապահական հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ Արման Տոնոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ կառավարչի հիմնավորումները: Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց ստացված Դատարանի որոշումը, նրան կից բողոքաբերի բողոքը:

Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանիը առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝

1.Լսել Աննա Քիշմիրյանի սնանկության գործով կառավարիչ Արման Տոնոյանին;

2.Ուսումնասիրել բողոքաբեր Վարդգես Սաղոյանի տրամադրած փաստաթղթերը;

3.Ուսումնասիրել կառավարիչ Արման Տոնոյանի կողմից ներկայացվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի անդամները, սնանկության գործով կառավարիչը համաձայնեցին աշխատանքային կարգին:

Հարցի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց դիմումատու-պարտատեր Վարդգես Սաղոյանը, ով հայտնեց, որ դատավարության ժամանակ պարզվել էր, որ Աննա Քիշմիրյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի թիվ 05-085-0020-0004 կադաստրային ծածկագրով 0.226 ՀԱ հողատարածքը «Արաքսռիելթի» ՍՊԸ-ի կողմից գնահատվել է 2,050,000 ՀՀ դրամ, մինչդեռ կառավարչի կողմից անկախ գնահատող ընկերություն գտնելու պրոցեսը տևել է 6 ամիս, ապա ևս 3 ամիս տևել է մինչև գնահատողը կգնար տարածքն ուսումնասիրելու և ևս 3 ամիս սպասել են պատասխանի: Գնահատումից հետո էլ տևական ժամանակ իրեն չեր տրամադրվում եզրակացություն գույքի արժեքի վերաբերյալ: Արման Տոնոյանը իրեն բանավոր պատասխանել էր, որ գույքի համատեղ սեփականտիրոջ բաժնեմասը գնելու առաջարկ կուղարկի, սակայն տեղեկություն չունի՝ ուղարկել է, թե ոչ:

Բողոքի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց Աննա Քիշմիրյանի սնանկության ·áñÍáí կառավարիչ Արման Տոնոյանը, ով պարզաբանեց, որ իր գործառույթների շրջանակներում կատարել է համապատասխան հարցումներ պետական մարմիններին՝ ՀՀ Տարածքային կառավարման և Ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ՊԵԿ-ին, ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը, և պատասխան գրություններից պարզվել է, որ պարտապանի անվամբ որևէ գույք գրանցված չէ: Արման Տոնոյանը շարունակեց, որ կատարել է հարցում ՀՀ Կադաստրի Կոմիտեի աշխատակազմին «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանմանը, համաձայն որի ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի թիվ 05-085-0020-0004 կադաստրային ծածկագրով 0.226 ՀԱ հողամասի նկատմամբ գրանցված է Աննա Քիշմիրյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը և ՀՀ տարածքում նախորդ հինգ տարիների ընթացքում Աննա Քիշմ իրյանի կողմից կատարվել է օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում՝ ք. Երևան, Ռոստոմի փողոց 51/2 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ: Սնանկության գործի կառավարչի լիազորության շրջանակներում կատարել եմ Աննա Քիշմիրյանի գույքի գույքագրումը և 29.08.2022 թ.-ին ծանուցել եմ Աննա Քիշմիրյանին և Վարդգես Սաղոյանին, որ գույքի գնահատման նպատակով հրավիրվել է անկախ գնահատող: Համաձայն 20.10.2023 թ.-ին «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ հողամասի շուկայական արժեքը գնահատվել է 3,000,000 ՀՀ դրամ: Աննա Քիշմիրյանը հանդիսանում է Սերյոժա Քիշմիրյանի դուստրը, ով մահացել է 28.04.2017 թ.-ին, սակայն դուստրը և որդին մինչ օրս չեն ժառանգել Սերյոժա Քիշմիրյանին պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի թիվ 05-085-0020-0004 կադաստրային ծածկագրով 0.226 ՀԱ հողամասի բաժնեմասին իրենց

հասանելիք բաժինը: Կառավարիչը նշեց, որ Վարդգես Սաղոյանի տրամադրած տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ անկախ գնահատող «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի կողմից հողամասի շուկայական արժեքը գնահատվել է 3,000,000 ՀՀ դրամ, ավելին՝ Վարդգես Սաղոյանը բանավոր խնդրել է գնահատման հաշվետվության մասին տեղեկատվություն, որը ինքը նույնպես հայտնել է բանավոր:

Ելույթը շարունակեց Վարդգես Սաղոյանը և նշեց, որ 2023 թ.-ի հոկտեմբեր ամսին Տոնոյանը և Աննա Քիշմիրյանը իրեն հայտնել են, որ հողամասի գնորդ են գտել, որն, ինչպես պարզվեց, միևնույն անձն էր: Այնուհետև Տոնոյանն իրեն բանավոր տեղեկացրել է, որ Աննա Քիշմիրյանի փաստաբանից տեղեկացել է, որ վերջինս ունի եղբայր, ով այդ հողատարածքից պետք է բաժին ստանա: Վարդգես Սաղոյանը ուշադրություն հրավիրեց այն փաստին, որ հողը պատկանել է միայն Ա.Քիշմիրյանին և նրա մորը՝ համատեղ սեփականության իրավունքով, որը հավաստվում է անշարժ գույքի գնահատման եզրակացության մեջ և հիմք հանդիսացող փաստաթղթերում:

Վարդգես Սաղոյանը բերեց երկրորդ փաստարկը այն մասին, որ Աննա Սերյոժայի Քիշմիրյանի և Տիգրան Պետրոսի Աշխարյանի միջև 20.06.2018թ. կնքվել է անշարժ գույքի վաճառքի պայմանագիր, որով Աննա Քիշմիրյանը 8,000,000 /ութ միլիոն/ ՀՀ դրամով վաճառել է իրեն պատկանող ք. Երևան, Ռոստոմի փող. 51/2 հասցեում գտնվող անշարժ գույքը: Այնինչ այդ նույն անշարժ գույքը Աննա Քիշմիրյանը պայմանագիր կնքումից մի քանի ամիս առաջ փորձել էր վաճառել իրեն 22,000 ԱՄՆ դոլարով, որը դրամի վերածելով կազմում էր 10,560,000 ՀՀ դրամ /դոլարի կուրսը հաշվարկվել է այդ տարիների նվազագույն կուրսով՝480 դրամով/: Այսինքն հաշված ամիսների ընթացքում անշարժ գույքի շուկայական արժեքը 2,560,000 ՀՀ դրամով էժանացել է, ինչը անհիմն է, որը հաստատվում է Աննա Քիշմիրյանի և իր միջև կնքված թիվ ԵԴ/1778/02/18 քաղաքացիական գործով 07.02.2019թ.-ի կայացրած վճռով, որտեղ Աննա Քիշմիրյանը գույքի արժեքի վերաբերյալ որևէ առարկություն չէր ներկայացրել:

Բողոքաբերի պնդմամբ սնանկության կառավարիչը պարտավոր էր առաջնորդվել ՀՀ Սնանկության մասին օրենքի 54 հոդվածի 1-ին մասի դ/ենթակետի պահանջով, այն է՝ «կառավարիչը պարտատերերի պահանջների վերջնական ցուցակի հաստատումից հետո վեց ամսվա ընթացքում դիմում է դատարան՝ դատական կարգով հետ ստանալու պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքների, փոխանցումների և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնասը, որը հետևանք է գույքի, ծառայության, աշխատանքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրությամբ դրա շուկայական արժեքի տարբերության՝ բացառությամբ, եթե գործարքը կնքվել է հրապարակային սակարկության հիման վրա» և դատարան ներկայացներ հայցադիմում դատական կարգով հետ ստանալու նշված գույքը: Սակայն այս տարիների ընթացքում նման գործողություն ևս չի կատարվել, հայց չի ներկայացվել դատարան: Վարդգես Սաղոյանի բոլոր բանավոր պահանջները վճիռը կատարելու մասին մնացել են անհետևանք: Այժմ էլ լրացել է հայց ներկայացնելու ժամկետը, ինչը նշանակում է, որ այլևս այդ հայցով դատարան դիմելն անհնար է, որովհետև հայցը կմերժվի ժամկետների լրանալու հիմքով: Սակայն այս հայցը դատարան ներկայացնելը որևէ բարդություն չէր առաջացնում, քանի որ Ա.Տոնոյանի համար պետք չէր հայցն ինքնուրույն գրելը, Վարդգես Սաղոյանի փաստաբանը հայցը պատրաստել և տրամադրել էր Տոնոյանի դեռևս 2021 թ., որպեսզի նա ստորագրեր և ուղարկեր դատարան: Ըստ իրեն Տոնոյանը տարիներ է ձգել և այդպես էլ պատրաստի հայցը չի ներկայացրել դատարան, իսկ բանավոր հարցումներին, թե պատճառն ինչ է, որ չի ներկայացնում, պատասխանել էր, որ 44-օրյա պատերազմի դաշտում է, կվերադառնա, հետո կզբաղվի, 2 անգամ ասել է, թե կորոնավիրուսով է հիվանդ, հետո որ այլ հիվանդություն ունի, ապա քրոջ սկեսրայրն էր մահացել, հետո Ա.Քիշմիրյանը արտերկրում էր, հետո գյուղում, կգա նոր կզբաղվի և այդպես շարունակ տարբեր պատճառաբանություններ, որոնք երեք տարով ձգձգեցին

գործը: Այս բոլոր տարիների ընթացքում Վարդգես Սաղոյանին փոխանցվել է ընդամենը 39700 ՀՀ դրամ:

Վարդգես Սաղոյանը նշեց, որ 2022 թ.-ին ինքը բողոք է ներկայացրել ՀՀ Սնանկության կառավարիչների կոլեգիա և ՀՀ սնանկության դատարան, հայտնելով Ա. Տոնոյանի անգործության մասին, սակայն Կոլեգիայում հայցը մերժվել է, պատճառաբանելով, որ Տոնոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և նրան կարգապահական տույժի ենթարկելու հիմքերը բացակայում են, իսկ դատարանը մերժեց, գտնելով, որ սնանկության կառավարիչը կատարել է իրեն օրենքով վերապահած լիազորությունները: Եվս մեկ տարի Տոնոյանը շարունակում էր խոստումներ տալ, թե գործն ընթացքի մեջ է, բայց ոչ մի պատշաճ գործողություն չէր կատարում:

2023 թ.-ի դեկտեմբերին Վարդգես Սաղոյանը դիմում-բողոք է ներկայացնում ՀՀ Արդարադատության նախարարություն՝ խնդրելով Ա.Տոնոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկել, որը կրկին մերժվել է, քանի որ սնանկության գործը դեռ ավարտված չի եղել:

Ապացուցողական բոլոր փաստաթղթերը հանձնվեցին հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին և հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի անդամները համաձայնեցին այն մտքին, որ ներկայացված փաստական հանգամանքները բավական են, որ սնանկության գործով կառավարիչ Ա. Տոնոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ կայացվի ժողովի որոշում:

Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանը առաջարկը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ուսումնասիրելով գործը, նաև լսելով կողմերին, «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անդամները եկան այն եզրակացությանը, որ բողոքը հիմնավոր է, կառավարիչը պատշաճ չի իրականացրել սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնակարգով իրեն վերապահված գործառույթները: Խախտվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածը, մասնավորապես՝

1. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում կառավարիչն իրականացնում է պարտապանի գույքի գույքագրում: Գույքի մեծ ծավալների կամ այլ հարգելի պատճառների առկայության դեպքում դատարանը կարող է երկարաձգել գույքագրման ժամկետը ողջամիտ ժամկետով: Կառավարչի պահանջով պարտապանը (պարտապանի ներկայացուցիչը) պարտավոր է ներկա լինել և աջակցել գույքագրմանը:

7. Գույքագրման արդյունքներն ամփոփվում են գույքագրման ակտում, որն ստորագրում են կառավարիչը և գույքագրմանը մասնակցած այլ անձինք: Պարտապանի (պարտապանի ներկայացուցչի) ստորագրությունը վկայում է, որ նա ներկա է եղել գույքագրմանը և երաշխավորում է, որ պարտապանին պատկանող ամբողջ գույքը գույքագրվել է: Գույքագրման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում պարտապանը (պարտապանի ներկայացուցիչը) ստորագրում է գույքագրման ակտը՝ կցելով դրան իր գրավոր առարկությունը: Գույքագրման ակտն ստորագրելուց խուսափելու դեպքում կառավարիչն այդ մասին նշում է կատարում գույքագրման ակտում:

Խախտվել է նաև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կառավարչի լիազորությունները, մասնավորապես՝

գ) պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից.

դ) իր լիազորությունների կատարումը պատշաճ ապահովելու նպատակով ներգրավում է, իսկ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ենթաօրենսդրական ակտով սահմանված չափանիշներին համապատասխանող պարտապանի դեպքում պարտատերերի ժողովի որոշմամբ պարտավոր է ներգրավել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններ կամ մասնագետների և այլ աշխատակիցների և նրանց վարձատրել պարտապանի հաշվին. Փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ձայն խնդրեց հանձնաժողովի անդամ Ռուբեն Խալաթյանը, ըստ որի սնանկության գործով կառավարիչ Արման Տոնոյանը տվյալ սնանկության վարույթում չի կատարել օրենքով սահմանված իր պարտականությունները և թերացել դրանց կատարման մեջ:

Հանձնաժողովի Նախագահը հարցը դրեց քվերակության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ – 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Աննա Քիշմիրյանի սնանկության գործով կառավարիչ Արման Տոնոյանի նկատմամբ իրեն վերապահված լիազորությունները ժամանակին չկատարելու համար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի հոդված 27.5-ով սնանկության կառավարչի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նախազգուշացում:

2.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ»ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

3.Հաստատումից հետո հնգօրյա ժամկետում սույն որոշման օրինակը ուղարկել ՀՀ Արդարադատության նախարար Գ.Մինասյանին:

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Մովսիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռուբեն Խալաթյան

Արմենակ Ադամյան

Հարություն Գևորգյան